

52. ԱՍՏՈԾ ՈՐ ՄԱՐԴԻ ՈՒՋԵՆԱ, ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՏԱ,
ԿԻՆՐԻ ՀԵՐԴԿՈՎ, ԷՆ ՎԵ ԿԱԾԻ

Մարդ ու կնիկ են ըլնում: Մարդը էնքա՛մ թամբալ ա ըլնում,
էնքա՛մ թամբալ, որ էլ չեմ կարա ասի:

Խեղճ կնիկը աստու իրան օրը նրան ասում էր.— Ա՛յ մարդ,
ա՛րի քտենց՝ մի՛ անի. ընչանք ե՞ր պարապ-սարապ պտի ման
դաս, մի բանի, մի գործի չկպնես. ախար չէ՛ որ մենք էլ մեղք ենք.
մեղ ուտիլ ա պետք, հագնիլ ա պետք. մեղ ո՞վ կտա, ո՞վ կբերի
հերդկովը վե կածի:

Համա ո՛ւմ ես ասում. մարդը ըսկի այնումն էլ չէր քցում. հենց
միալար ասում էր.— Աստոծ որ մարդի ուզենա հարստություն տա,
կբերի հերդկով էլ վե կածի:

Մին, էրկու, հինգ, տասը, խեղճ կնիկը էնքամ ասում ա, որ
մարդի բեյինը մննում ա: Օրեն մի օրը շութը վեր ա ունում, էթում
հանդը, որ վար անի: Մխելի տեղ վարում ա, մըն էլ մի դաֆիլ տե-
նում ա շութը մի դադի դեմ առավ: Եզնեբը կաննացնում ա, մտիկ
տալի, տենում ի՞նչ՝ մի գյուղում լիքը ոսկի: Էս մեր թամբալը ձե-
ռովը գյուղումը վեր ա ունում ընդիան, էն դիհը քցում ու էլի իրա
վարն ա անում:

— Թե՛ աստոծ էս գյուղում ոսկին ինձ ա զսմաթ արե, — ասում

¹ Տպագիր տեքստում հաջորդում է՝ մի ըլնի, որը բանահավաքի ձեռքով
քննված է (Մ. Կ.):

ա,— Թո՛ղ իրա ձեռովը վեր ունի, բերի մեր հերդկովը վեր ածի, թե չէ ես վեր ունող, տուն տանողը չեմ:

Իրիկունը գալիս ա տուն, կնկանը նաղլ անում իրա գլխով անցկացածը, թե.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. հանդումը մի գյուգյում ոսկի գտա, թողի ընդե, էկա:

— Ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— հո չե՛ս գովե. խի՛ չիր վեր ունում, բերում. հազիր քեզ աստոծ էրկու ձեռով էր տվե. հմի հո՛ խալխը կտանեն:

— Չէ՛, ա՛յ կնիկ,— ասում ա,— քու խելքը ի՛նչ ա կտրում. տե՛ս, աստոծ ո՛նց ա իրա ձեռովը էն գյուգյում ոսկին վեր ունում, բերում մեր հերդկովը վեր ածում:

Սա՛ հա, նա՛ չէ, սա՛ հա, նա՛ չէ, մախլաս՝ մարդ ու կնիկ ըստե մի լավ կռիվ են անում. համա էլի մարդը իրա ասածն ա անում:

Նո՛ր կնիկը, ճարը կտրած, էթում ա իրանց հարևանին թաքուն ասում, թե.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. իմ գիծ մարդը հանդումը ֆլա՛ն տեղը մի գյուգյում ոսկի ա գտե, հենց ընդե էլ թողե՛ր ա, վե կացե էկե. գնա բե՛, կեսն ինձ, կեսը քեզ: — Ըսենց տեղը-տեղին, նշանով ասում ա:

էդ հարևանն ա՛ էն սհաթը ուրախ-ուրախ վեր ա կենում, էթում հանդը, կնկա ասած տեղը ման գալի, գյուգյումը գտնում ա: Բաց ա անում, ի՛նչ տենում՝ մեջը լիքը օձ ու կարիճ:

— Բա՛ն չկա,— ասում ա ինքն իրան— նրանք հո ըսենց ինձ խաբեցին, տես, ե՛ս ինչ օղիա եմ բերում նրանց գլուխը:

Անսաս էդ հարևանը գյուգյումի բերանը էլ եդ կալնում ա, դալիմ կապում, վեր ունում բերում գեղը: Մուկը գետինը կոխում ա, թե չէ, գյուգյումը վեր ա ունում, գալի նրանց կտրանը կաննում. գյուգյումի բերանը ուսուլով բաց ա անում, յա՛լլա, նրանց հերդկովը շուտ տալի ներքե: Ե՛ր՛ու, ոսկին գեննին կիտվում ա: Աստու հրամանով օձ ու կարիճը էլ եդ ոսկի ա՛ դառնում:

— Ա՛յ կնիկ,— ձեն ա տալի թամբալ մարդը,— դե ա՛րի հա՛վա՛քա. քեզ որ ասում ի՛, դու չիր ավատում. տե՛հար՝ ոնց աստոծ իրա ձեռովը էն գյուգյում ոսկին բերեց, մեր հերդկովը վեր ածեց:

Կնիկը գալիս ա տենում՝ ղորթ որ, դեղին-դեղին ոսկիքը հրե՛նիկ գեննին կիտած. ուրախանում, աշխարով մին ա ըլնում: